Project funded by EUROPEAN UNION

WETOUR

Black Sea CROSS BORDER COOPERATION

Հունիս, 2023

Մամլո հաղորդագրություն 2

Սևծովյան կանանց ձեռներեցության կապ. կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով (WETOUR – BSB1030)

«Կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով»

Նախագիծ՝ WETOUR
Վայրը՝ Սև ծովի ավազան (Հունաստան, Վրաստան, Բուլղարիա, Հայաստան, Թուրքիա)
Գործընկերներ՝ SEGE, GAWB, BAA, ARMECAS, KAGIDER
Ժամանակահատվածը՝ 26/06/2021 – 25/06/2023

WE TOUR – «Սևծովյան կանանց ձեռներեցության կապ. կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով, որը ֆինանսավորվել է **ENI CBC Black Sea Basin 2014-2020** ծրագրի կողմից, նպատակ ունի ստեղծել անդրսահմանային բիզնես ցանց Սև ծովի ավազանի տարածքում՝ ամրապնդելով, աջակցելով և զարգացնելով կանանց ձեռներեցությունը զբոսաշրջության միջոցով և տրամադրելով կանանց նոր տնտեսական և սոցիալական հնարավորություններ:

Խնդիրը

Կանանց ձեռներեցությունը ձևավորվող ոլորտ է գլոբալ բիզնես միջավայրում, իսկական շարժիչ ուժ այսօրվա ժամանակակից տնտեսության մեջ: Այն ձևավորում և վերաիմաստավորում է գործարար միջավայրը և ողջ հասարակությունը, սակայն սևծովյան տարածաշրջանում կանանց ձեռներեցությունը ներկայացնում է չօգտագործված ներուժ: Չնայած գենդերային հավասարության խթանմանն ուղղված Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկարամյա հանձնառությանը, Սև ծովի ավազանում պահպանվում են ղեկավարման, որոշումների կայացման, կրթության ոլորտում անհավասարությունները և կանանց մեկուսացումը տնտեսական և սոցիալական կյանքում:

Ցավոք սրտի, սոցիալ-մշակութային ճնշումները սահմանափակել են կանանց հասանելիությունը բովանդակալից ձեռնարկատիրական փորձառություններին և հաճախ ստիպել են նրանց գնալ մասնագիտական ճանապարհներով, որոնք հաճախ ընդհատվում են ընտանեկան պարտականություններով: Բացի կանանցից ակնկալվող բազմաթիվ սոցիալական դերերից, որոնք կարող են հեռացնել նրանց ձեռներեցության գաղափարից, նրանք, ում հաջողվում է դառնալ ձեռներեց, դեռևս անհավասարությունների են բախվում: Նրանք սովորաբար ավելի փոքր կապիտալ ունեն իրենց բիզնեսը կառավարելու և զարգացնելու համար, ինչը հաճախ հանգեցնում է նրանց բիզնեսի շուտափույթ փակման ավելի մեծ հավանականության:

Կարևոր է ընդգծել, որ ամբողջ Սև ծովի ավազանում տարածաշրջանի բոլոր ձեռնարկատերերի միայն 32%-ն են կանայք, և հնարավորությունները շարունակում են կորչել մի դարաշրջանում, որտեղ կայուն տնտեսական զարգացումը գլխավոր առաջնահերթությունն է բոլոր եվրոպական կառավարությունների համար: Ընդհանուր առմամբ, կանանց ձեռներեցությունը համարվում է որպես ամբողջ Եվրոպայի տնտեսական հաջողության կարևոր լծակ, սակայն նույնիսկ այսօր կանանց ուղղված նախաձեռնությունները սակավ են:

Լուծումը

Հետազոտությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջությունը դարձել է եկամտի հիմնական աղբյուրներից մեկը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում՝ բիզնեսի ծավալով, որը համարժեք է կամ գերազանցում է նավթի արտահանմանը, սննդամթերքին կամ ավտոմոբիլային արդյունաբերությանը: Ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը կանանց հզորացման ավելի մեծ հնարավորություններ են տալիս այլ ոլորտների համեմատ՝ ոլորտին տալով ավելի մեծ պատասխանատվություն կանանց առաջընթացի համար:

Սեւծովյան տարածաշրջանը Եվրասիայի ամենամեծ զբոսաշրջային դեստինացիաներից է: Զբոսաշրջության արդյունաբերությունը դարձել է եկամտի զգալի աղբյուր Սևծովյան տարածաշրջանի երկրների մեծ մասի համար: Սև ծովը ձևավորվում է որպես համախմբված տարածաշրջան և գրավիչ զբոսաշրջային վայր ոչ միայն օտարերկրյա այցելուների, այլ նաև իր բնակիչների համար: Սև ծովի երկրները գրավում են համաշխարհային զբոսաշրջության գրեթե 12%-ը՝ ավելի քան

106 միլիոն զբոսաշրջիկներով: Տարածաշրջանային համագործակցության համար վճռորոշ է դառնում վերջին տարիներին ներտարածաշրջանային զբոսաշրջային հոսքերի արագ աճը, մի միտում, որը չկար 1990-ականներին: Սևծովյան տարածաշրջանն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն, սակայն այնքան հայտնի կամ գրավիչ չէ, որքան եվրոպական այլ զբոսաշրջային գոտիները:
Այնուամենայնիվ, տարածաշրջանը համեմատաբար թերզարգացած է, հատկապես եվրոպական այլ զբոսաշրջային ուղղությունների համեմատ: Մարտահրավերները, ինչպիսիք են ենթակառուցվածքների բացակայությունը, ծառայությունների ցածր որակը և ցածր զբաղվածությունը զբոսաշրջության ոլորտում, հատկապես կանանց համար, խոչընդոտում են կայուն զարգացմանը: Զբոսաշրջության օպերատորները և գործակալները, որոնք տեղակայված են ավելի քիչ հայտնի դեստինացիաներում, բախվում են իրենց դեստինացիաները արդյունավետ և նպատակային կերպով գովազդելու մարտահրավերին: Արժեշղթայի առկա և պոտենցիալ շահագրգիռ կողմերի միջև ձեռնարկատիրական հմտությունների և կարողությունների բացակայությունը (ինչպիսիք են ՏՀՏ գործիքների օգտագործումը, նեթվորքինգը, ռազմավարական մտածողությունը, նորարարական բիզնես մոդելի ձևավորումը և հարակից արտադրանքները) խոչընդոտում են ավելի կայուն մոտեցման հաստատմանը՝ տարածաշրջանը որպես զբոսաշրջության վայր խթանելու համար:
WE TOUR նախագիծն ուղղակիորեն կապված է տարածաշրջանի ընդհանուր մարտահրավերների հետ: Ծրագրի գործընկերները ամուր հարաբերություններ են հաստատել նոր ռազմավարություններ մշակելու և ավելի շատ կանանց հզորացնելու իրենց ջանքերում, խթանելով գենդերային հավասարությունը՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական իշխանությունների հետ: Նրանք նպաստում են գիտելիքի փոխանցմանը ծրագրի նպատակներին համահունչ սեմինարների միջոցով:
Ծրագիրը ներառում է 5 գործընկեր 5 տարբեր երկրներից՝ կին ձեռներեցների 4 ասոցիացիա Հունաստանից, Բուլղարիայից, Վրաստանից և Թուրքիայից և 1 զբոսաշրջային ասոցիացիա Հայաստանից: Անդրսահմանային համագործակցությունը շատ կարևոր է, քանի որ այն կանանց տրամադրում է լավագույն փորձը և տարածաշրջանում արդեն իսկ իրականացված հաջողված քաղաքականությունը՝ նրանց ձեռներեցությանը և զբոսաշրջությանը մոտեցնելու նպատակով:

Արդյունքները

WE TOUR նախագիծը գործել և շարունակում է աշխատել նույնիսկ ավարտից հետո՝ կանանց ձեռներեցությանը և զբաղվածությանը մոտեցնելու համար: Ծրագրի հիմնական արդյունքները ներառում են.

1. Զարգացնել կանանց բիզնես հմտությունները զբոսաշրջության, բիզնեսի կառավարման և թվային մարքեթինգի վերաբերյալ կրթական նյութերի ստեղծման և սեմինարների կազմակերպման միջոցով: Առնվազն 500 կին, ձեռներեց կամ պոտենցիալ ձեռներեց արդեն վերապատրաստվել է բիզնեսի արդյունավետ կառավարման և զարգացման, զբոսաշրջության ոլորտում ներգրավվելու և տեղական և եվրոպական քաղաքականության մասին տեղեկացված լինելու վերաբերյալ:
2. Փորձի և կրթական հնարավորությունների փոխանակում «WE TOUR» վեբ պորտալի ստեղծման միջոցով: «WE TOUR» պորտալը թույլ է տալիս ծրագրի գործընկերներին և շահագրգիռ անձանց փոխանակել փորձը ձեռնարկատիրության և Սևծովյան տարածաշրջանի մասին արժեքավոր տեղեկատվության վերաբերյալ: Պորտալն աջակցում է ծրագրի գործընկերների հավաքական ջանքերին՝ ուղղված կանանց ձեռներեցության և եվրոպական մակարդակով զբոսաշրջության զարգացմանը:
3. Կանանց դերի ամրապնդում և սևծովյան տարածաշրջանում կանանց ձեռներեցությանն աջակցելը տեղական միջոցառումների կազմակերպման և սոցիալական ցանցերի գործունեության միջոցով:
4. Կանանց ինքնավստահության և նրանց ձեռնարկատիրական հմտությունների խթանում՝ ստեղծելով ուժեղ ցանց՝ ներգրավելով կանանց աջակցող կազմակերպություններին, ձեռնարկատիրական ասոցիացիաներին, պետական իշխանություններին և այլ տեղական շահագրգիռ կողմերին:

Դաշտային հետազոտություն

Ծրագրի գործընկերները, WE TOUR-ի գործունեության սկզբում, իրականացրել են կանանց ձեռներեցության քարտեզագրումը՝ Սև ծովում զբոսաշրջության ոլորտում ակտիվ ձեռնարկատերերի, ՓՄՁ-ների և երիտասարդ մասնագետների իրավասությունները, ուժեղ կողմերը, թույլ կողմերը և կարիքները բացահայտելու

նպատակով: Հետազոտության արդյունքները ներկայացված են Հայաստանի, Հունաստանի, Բուլղարիայի, Թուրքիայի և Վրաստանի զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցների իրավասությունների և կարիքների համեմատական զեկույցում: Ստորև կարող եք գտնել հիմնական բացահայտված դրույթները.

Հունաստան

Հունաստանում զբոսաշրջության ոլորտը զգալիորեն նպաստում է երկրի տնտեսությանը, որը ներկայացնում է ՀՆԱ-ի մոտ 20%-ը: Համաձայն Առևտրի և ձեռներեցության Հունական Համադաշնության զեկույցի (ESEE)՝ կանայք կազմում են երկրում ձեռնարկատերերի ընդհանուր թվի միայն 31%-ը: Թեև զբոսաշրջության ոլորտում կանանց ձեռներեցության վերաբերյալ կոնկրետ տվյալներ չկան, կարելի է ենթադրել, որ կանայք նույնպես այս ոլորտում քիչ են ներկայացված:

Հմտությունների առումով Հունաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցները պետք է զարգացնեն մարքեթինգային և ֆինանսական կառավարման հմտություններ: WE TOUR-ի հետազոտությունը պարզել է, որ կին ձեռներեցները հակված են փոքր բիզնեսներ վարել՝ ֆինանսավորման և մարքեթինգային ռեսուրսների սահմանափակ հասանելիությամբ: Այս խնդիրը լուծելու համար պետք է մշակվեն ծրագրեր և նախագծեր, որոնք ապահովում են ուսուցում մարքեթինգի և ֆինանսական կառավարման ոլորտներում:

Բուլղարիա

Բուլղարիայում զբոսաշրջության արդյունաբերությունը նույնպես կարևոր ներդրում ունի երկրի տնտեսության մեջ՝ 2019 թվականին 4,4% աճով: Ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) տվյալների՝ երկիրն ունի կին ձեռներեցության ամենաբարձր ցուցանիշներից մեկը աշխարհում. Բուլղարիայում բոլոր փոքր և միջին ձեռնարկությունների մոտ 46%-ը պատկանում է կանանց: Սակայն զբոսաշրջության ոլորտում կանանց ձեռներեցության վերաբերյալ կոնկրետ տվյալներ չկան:

Բուլղարիայում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին անհրաժեշտ է աջակցություն՝ զարգացնելու իրենց թվային հմտությունները և բարելավելու իրենց նեթվորքինգի կարողությունները: Երկրի տեղադիրքի շնորհիվ այն ունի յուրահատուկ դիրք՝ որպես դարպաս դեպի Եվրոպա և Ասիա, ինչը մեծ

հնարավորություններ է տալիս զբոսաշրջության համար: Այնուամենայնիվ, թվային և ֆինանսական խոչընդոտները և ցանցային հնարավորությունների բացակայությունը կարող են սահմանափակել կին ձեռներեցների հաջողությունը զբոսաշրջության ոլորտում:

Թուրքիա

Թուրքիայում զբոսաշրջության արդյունաբերությունը զգալի ներդրում ունի տնտեսության մեջ, որը կազմում է նրա ՀՆԱ-ի մոտավորապես 12%-ը: Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի զեկույցի համաձայն՝ կանայք կազմում են երկրի բոլոր ձեռնարկատերերի միայն 22%-ը: Ավելին, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) զեկույցը ցույց է տվել, որ Թուրքիայի զբոսաշրջության ոլորտում կանանց մասնակցությունը սահմանափակ է սոցիալական նորմերի և գենդերային կողմնակալության պատճառով:

Թուրքիայում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին անհրաժեշտ է աջակցություն՝ զարգացնելու իրենց մարքեթինգային և առաջնորդական հմտությունները: WE TOUR-ի հետազոտության համաձայն՝ զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցները հակված են կենտրոնանալ ցածր որակավորում ունեցող և ցածր վարձատրվող մասնագիտությունների վրա: Հետևաբար, ծրագրերն ու նախագծերը, որոնք ապահովում են առաջնորդության և կառավարման ուսուցում, կարող են օգնել այս ոլորտում կին ձեռներեցներին ստանձնել ավելի կարևոր դերեր և ավելացնել իրենց եկամուտները:

Հայաստան

Հայաստանում զբոսաշրջության ոլորտը աճող ոլորտ է, որի միջին տարեկան աճը 8% է 2016-ից 2019 թվականներին: Ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ կանայք կազմում են երկրի բոլոր ձեռնարկատերերի միայն 26%-ը: Սակայն զբոսաշրջության ոլորտում կանանց ձեռներեցության վերաբերյալ կոնկրետ տվյալներ չկան:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին անհրաժեշտ է աջակցություն՝ զարգացնելու իրենց մարքեթինգային հմտությունները և բարելավելու իրենց ֆինանսական հասանելիությունը: Հայաստանի դիրքը Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում մեծ հնարավորություններ է տալիս զբոսաշրջության համար:

Այնուամենայնիվ, տնտեսական խոչընդոտները և ֆինանսական ռեսուրսների բացակայությունը կարող են սահմանափակել այս ոլորտում կին ձեռներեցների հաջողությունը:

Վրաստան

Վրաստանում զբոսաշրջության արդյունաբերությունը տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է, որը կազմում է երկրի ՀՆԱ-ի մոտ 7%-ը: Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության զեկույցի համաձայն՝ կանայք կազմում են երկրի բոլոր ձեռնարկատերերի միայն 29%-ը: Ավելին, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) զեկույցը ցույց է տվել, որ Վրաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցները բախվում են բազմաթիվ մարտահրավերների, ներառյալ ֆինանսավորման սահմանափակ հասանելիությունը, վերապատրաստման և նեթվորքինգի բացակայությունը և գենդերային կողմնակալությունը:

Վրաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին անհրաժեշտ է աջակցություն՝ զարգացնելու իրենց թվային և մարքեթինգային հմտությունները: WE TOUR-ի հետազոտությունը ցույց է տվել, որ Վրաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցները բախվում են թվային տեխնոլոգիաների և մարքեթինգային ռեսուրսների հասանելիության մարտահրավերների: Ծրագրերն ու նախագծերը, որոնք ապահովում են թվային հմտությունների և մարքեթինգի ուսուցում, կարող են օգնել այս ոլորտում կին ձեռներեցներին հաղթահարել այդ խոչընդոտները և արդյունավետորեն մրցակցել շուկայում:

Ընդհանուր առմամբ, Հունաստանում, Բուլղարիայում, Թուրքիայում, Հայաստանում և Վրաստանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցների իրավասությունների և կարիքների բացահայտումը կարևոր նշանակություն ունի միջոցառումների և ծրագրերի զարգացման համար, որոնք կարող են աջակցել և բարձրացնել նրանց կարողությունները: Թեև այս երկրներում կին ձեռներեցների կարիքները տարբեր են, կան որոշ ընդհանուր թեմաներ, ինչպիսիք են մարքեթինգի, ֆինանսների, առաջնորդության, կառավարման և թվային հմտությունների վերապատրաստման անհրաժեշտությունը: Անդրադառնալով այս կարիքներին՝ WE TOUR ծրագրի գործընկերները հույս ունեն ստեղծել առավել ներառական և աջակցող միջավայր ոլորտի կին ձեռներեցների համար՝ նպաստելով տնտեսական զարգացմանը և կանանց հզորացմանը:

WE TOUR -ի վերապատրաստման ծրագիրը

WE TOUR-ի վերապատրաստման ծրագիրը մշակվել է սևծովյան տարածաշրջանի զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին աջակցելու համար՝ հիմնվելով հետազոտության արդյունքների վրա: Վերապատրաստման ծրագիրը կոչված է հետագայում զարգացնելու նրանց բիզնես հմտությունները և մարքեթինգային կարողությունները՝ հնարավորություն տալով արդյունավետորեն կառավարել և զարգացնել իրենց զբոսաշրջային բիզնեսը՝ միաժամանակ սևծովյան տարածաշրջանը որպես գրավիչ զբոսաշրջային ուղղություն խթանելու համար՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաները և մարքեթինգային նորարարական գործիքները:

Վերապատրաստման ծրագիրը բաժանված է երկու հիմնական մասի, որոնցից յուրաքանչյուրը հինգ մոդուլ է ներառում: Առաջին դասընթացը՝ «Մարքեթինգը և կառավարումը զբոսաշրջության մեջ», նախատեսված է զբոսաշրջության ոլորտում ներգրավված կամ հետաքրքրված կանանց տրամադրելու անհրաժեշտ հմտություններ՝ իրենց զբոսաշրջային բիզնեսի մրցունակությունը բարձրացնելու համար: Շեշտը դրված է նրանց առաջարկների որակի, հաղորդակցության և շուկայավարման ռազմավարությունների վրա: Այս մոդուլը ներառում է ենթամոդուլներ՝ կապված զբոսաշրջության կառավարման, զբոսաշրջության խթանման, միջազգային զբոսաշրջության մարքեթինգի, կայուն զարգացման համար թվային մարքեթինգի և տուրոպերեյթինգի հետ:

Երկրորդ դասընթացը՝ «Զբոսաշրջության ռազմավարություններ և քաղաքականություն», նախատեսված է զբոսաշրջության ոլորտում քաղաքականություն մշակողների և մասնագետների ներգրավման համար՝ կայուն զբոսաշրջության հետ կապված մի շարք թեմաներով: Այս մոդուլը ներառում է հինգ ենթամոդուլներ, որոնք ներառում են զբոսաշրջության և դրա վիճակագրության ըմբռնումը, զբոսաշրջության նոր և նորարարական քաղաքականության մշակումը, բոլոր շահագրգիռ կողմերի միջև ուղղահայաց և հորիզոնական համագործակցությունը, ձեռնարկատիրական զբոսաշրջության հմտությունների ձևավորումը և տեղական առավելությունների օգտագործումը նպատակակետի զարգացման համար և տեղական համայնքներին այդ գործընթացում ներգրավելը:

Վերապատրաստման ծրագիրը փորձարկվել և կիրառվել է փորձնական հիմունքներով տեղական կրթական սեմինարների ընթացքում բոլոր գործընկեր երկրներում: Այն մշակվել է սոցիալական հաղորդակցության, բիզնեսի զարգացման և տեղական քաղաքականության ոլորտում համապատասխան հմտություններ և փորձ ունեցող մասնագետների կողմից:

«Մենք ոգևորված ենք սևծովյան տարածաշրջանում զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցների համար այս նորարարական վերապատրաստման ծրագրի մեկնարկով», - հայտարարեցին WE TOUR նախագծի գործընկերները: «Մեր նպատակն է հզորացնել կին ձեռներեցների՝ բիզնեսը կառավարելու և զարգացնելու հիմնական հմտություններն ու կարողությունները, ինչպես նաև խթանել Սևծովյան տարածաշրջանը որպես գրավիչ զբոսաշրջային վայր՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաները և նորարարական մարքեթինգային գործիքները»:

WE TOUR վերապատրաստման ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ծրագրի կայք՝ https://wetourproject.com/ կամ ուղղակիորեն կապվեք ծրագրի գործընկերների հետ:

Սևծովյան ավազանի 2014-2020 թթ. համատեղ գործառնական ծրագիր
SEGE - Հունաստանի կին ձեռներեցների ասոցիացիա
Հուլիս, 2021
«Սևծովյան ավազանի 2014-2020թթ.» համատեղ գործառնական ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Եվրոպական հարևանության գործիքի միջոցով և մասնակից երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից:
Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես WETOUR նախագիծը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՎԵՐՋ